

ՀՏԴ 581.92

Բուսաբանություն

Արմիդա ՀԱԿՈԲՅԱՆ

ԱրՊՀ, Կենսաբանության և քիմիայի ամբիոնի դոցենտ, գ.գ.թ.

E-mail: armidahakobyan_1@mail.ru

ԱՐՑԱԽԻ ՏԱՐԱԾՔԻ ՈՐՈՇ ԴԵՂԱԲՈՒՅՍԵՐ

Արցախի ֆլորան ունի հարուստ դեղաբույսերի հավաքածու, որոնք կարող ենք կիրառել մեր առօրյա կյանքում՝ կանխարգելելով մի շարք հիվանդագին երևույթներ կամ լուծելով որոշ առողջական խնդիրներ: Հոդվածի նպատակն է մեծացնել բնակչության հետաքրքրությունը մեր տարածաշրջանի բույսերի նկատմամբ՝ որպես արժեքավոր բուժական հումքի աղբյուրների: **Բանալի բառեր**՝ Արցախ, ֆլորա, դեղաբույս, բուսական պատրաստուկներ, հումք:

A. Акопян

НЕКОТОРЫЕ ЛЕКАРСТВЕННЫЕ РАСТЕНИЯ ТЕРРИТОРИИ АРЦАХА

Флора Арцаха имеет богатую коллекцию лекарственных растений, которые мы можем использовать в повседневной жизни, предотвращая ряд патологических явлений или решая некоторые проблемы со здоровьем. Цель работы - повысить интерес населения к лекарственным растениям нашего региона как к источникам ценного лекарственного сырья.

Ключевые слова: Арцах, флора, лекарственные растения, фитопрепараты, сырье.

A. Hakobyan

SOME HERBS OF ARTSAKH TERRITORY

The flora of Artsakh has a rich collection of herbs that we can use in our daily life, preventing a number of morbid phenomena or solving some health problems. The aim of the work is to increase the population's interest in medicinal plants of our region as sources of valuable medicinal raw materials.

Key words: Artsakh, flora, medicinal plant, herbal preparations, raw materials

Բնությունը մարդուն պարզևել է բազմաթիվ բուժիչ բույսեր, որոնք անգնահատելի դեղատուփ են հանդիսանում նրա համար: Հին ժամանակներից մարդիկ գիտեին բույսերի բուժիչ հատկությունների մասին: Բուսական պատրաստուկներն ավելի մոտ են մարդու էությանը, առավել հանդուրժողական են, և կարելի է երկար ժամանակ օգտագործել: Բուսական պատրաստուկների առավելությունն այն է, որ դրանք վերացնում են հիվանդության պատճառը: Նույնիսկ ներկայումս, երբ զարգացած են դեղաբանությունը և դեղագործական արդյունաբերությունը, դեղաբույսերի օգտագործումը մնում է արդիական: Դեղաբույսերն օգտագործվում են սուր և քրոնիկ հիվանդությունների բուժման համար, բացի այդ, օգտագործվում են որպես պրոֆիլակտիկ միջոց [1,2,4,7]: Դեղաբույսերը կարող են օգնել մարդուն ապրել առանց քիմիական և կենսաբանական գործընթացների կոպիտ միջամտությունների: Նրանց գործողությունը ավելի դանդաղ է, բայց շատ ճշգրիտ և արդյունավետ: Դեղաբույսերի նկատմամբ ուշադրության մեծացման պատճառն այն է, որ մի շարք սինթետիկ դեղամիջոցներ մարդկանց վրա թողնում են բացասական ազդեցություն: Ճիշտ է, մարդկանց մեծ մասը գիտի բուսական բժշկության, բուժիչ բույսերի կարևորության և օգտագործման անվտանգության մասին, սակայն կանոնակարգված տվյալները դեղաբույսերի և բուժիչ բաղադրատոմսերի մասին առավել հասանելի կլինեն բնակչությանը:

Ուսումնասիրության **նպատակն է** մեր տարածքի բուժիչ բույսերի հետազոտումը, դրանց դեղաբանական հատկությունների հավաքագրումը: Այդ նպատակով **խնդիր է** դրվել.

1. որոշել բնակչության կողմից օգտագործվող դեղաբույսերի տեսակային կազմը.

2. նկարագրել դեղաբույսերի աճեցման վայրերի բիոտոպը.

3. ուսումնասիրել տեղական ֆլորայի որոշ դեղաբույսերի դեղաբանական հատկությունները.

4. հավաքել և համակարգել ավանդական բժշկության որոշ բաղադրատոմսեր:

Դեղաբույսերն ուսումնասիրվել են երթուղարշավների ընթացքում, ըստ գրականության տվյալների, և տեղի բնակչության հարցումների: Մեր աշխատանքը մեծ գործնական նշանակություն կունենա, քանի որ մարդիկ իրենց հիվանդությունները բուժելու համար կօգտագործեն էկոլոգիապես մաքուր տեղական բուժիչ բույսերը ժողովրդական բաղադրատոմսերով:

Վատթարացող էկոլոգիական իրավիճակը, քրոնիկական սթրեսը, նստակյաց կենսակերպը և անհավասարակշռված սննդակարգը հանգեցնում են օրգանիզմի իմունային պաշտպանության նվազմանը: Իհարկե, անհնար է ամբողջությամբ բարձրացնել իմունիտետը, սակայն բուժիչ դեղաբույսերը, որոնք ունեն մեղմ և անվտանգ ազդեցություն, կարող են նրբորեն և ապահով կերպով աջակցել մեր մարմնի առողջացմանը: Առողջ օրգանիզմի համար մեծ

դեր ունեն վիտամինները: Մենդի մեջ վիտամիններ պարունակող մթերքների համալիր օգտագործումը, հանքային նյութերի համալիրը մեր առողջության որոշակի երաշխավորն է անառողջ միջավայրում: Վիտամին C-ն էական դեր է խաղում օրգանիզմի կյանքում: Այն մասնակցում է բջջի ռեդոքս գործընթացներին, անհրաժեշտ է հեմոգլոբինի սինթեզի համար և մասնակցում է հորմոնների սինթեզին: Վիտամին C-ի արժեքն անգնահատելի է տոբախների և թույների չեզոքացման գործում: Ուստի վիտամին C պարունակող թուրմերը և պատրաստուկները կարող են օգտագործվել կանխարգելիչ և բուժիչ նպատակներով:

Ստորև ներկայացվում է վիտամիններ պարունակող դեղաբույսերը.

Վիտամիններ պարունակող դեղաբույսեր

<i>Վիտամինի անվանումը</i>	<i>Վիտամիններ պարունակող հումքը</i>
Վիտամին C (ասկորբինաթթու)	մասուրի պտուղներ, հունական ընկուզենու պտուղներ և տերևներ, եղինջի, կաղամբի տերևներ, սոճու փշատերևներ, կարմիր պղպեղի պտուղներ, ցիտրուսայիններ, սև հաղարջ, գետնամորի; կանաչ սոխ և այլն
Նախավիտամին A (կարոտին)	չիչխանի, մասուրի, սովորական կծոխուրի, կարմիր պղպեղի, սև մոռենու պտուղներ, նարգեզի ծաղիկներ, կատվալեզվի տերևներ, չորածաղիկ, եղինջի տերևներ
Վիտամին K, K1 (ֆիլոխինոն)	եգիպտացորենի կողը, եղինջի տերևներ, հովվամախաղի, հազարտերևուկի, մատիտեղի, ջրապղպեղի խոտաբույսեր
Վիտամին P (ռուտին)	ճապոնական սոֆորայի կոկոններ, սևապտուղ արոսենի, ցիտրուսայինների պտղի կեղևը, ճնճղկապաշար, թեյի տերևներ
B խմբի վիտամիններ	b խմբի վիտամիններ պարունակում են բույսերի բոլոր մասերը, հատկապես սերմերը
Վիտամին E (տոկոֆերոլ)	մասուրի, չիչխանի պտուղներ, եգիպտացորենի, չիչխանի, արևածաղկի, բամբակի յուղերը
Վիտամին F (լինոլենային թթու)	վուշի, արևածաղկի, եգիպտացորենի սերմերը
Վիտամին PP (B3)	Բույսերի բոլոր մասերը, հատկապես սերմերը
Վիտամին U	Կաղամբի տերևներ

Ներկայումս հիվանդությունների բուժման համար բուժիչ բույսերի օգտագործումը դարձել է ամենաարդիականը: Ստորև ներկայացվում է հաճախակի օգտագործվող դեղաբույսերի կարգաբանական կազմը:

Մասրենի սովորական (Մ.շան) -R.canina L.- Шиповник собачий:

Հայկական տարածունները- մասրավարդ, մհասուր, փշավարդ: Մասրենին պատկանում է վարդագգիների ընտանիքին (Rosaceae): Տերևաթափ, երբեմն մշտադալար թփեր են, մինչև 3 մ բարձրության: Ունեն ամուր փշեր: Ծաղիկները վարդագույն են, պտուղները՝ կարմիր, երկարավուն: Ծաղկում է *մայիս-հունիս* ամիսներին, պտուղները հասունանում են *սեպտեմբեր-հոկտեմբեր* ամիսներին: Մասրենու պտուղները վաղուց են օգտագործվում ժողովրդական բժշկության մեջ: Պտուղների եփուկն օգտագործվում է որպես վիտամինային և մարսողությունը լավացնող միջոց: Մասուրի յուղը դրական ազդեցություն ունի կուլիտի, տրոֆիկ խոցերի, ռինիտի, ֆարինգիտի և դերմատիտի վրա: Պսակաթերթիկները և պտուղները օգտագործում են թեյի մեջ: Ծաղիկների մզվածքը ժողովրդական բժշկության մեջ օգտագործում են որպես հականեխիչ միջոց, վարակիչ մի շարք հիվանդությունների, թոքային պալարախտի, երիկամային, լյարդի և ստամոքսաաղիքային տրակտի ախտահարումների ժամանակ, մասրենու պտուղները համարվում են հիանալի հակալնդախտային միջոց, աթերոսկլերոզի դեմ: Դեղաբույսը դրականորեն է ներգործում նյութափոխանակության խանգարումների, հիպերտոնիկ հիվանդության ընթացքի վրա: Մասուրի եփուկը հանդիսանում է առողջության համար անհրաժեշտ վիտամինների ու միկրոտարրերի հսկայական աղբյուր: Նա բուժիչ հատկությունների լայն տիրույթ ունի՝ սկսած մրսածությունից մինչև մարսողական խանգարումներ: Այն իր բուժիչ հատկություններով ոչնչով չի զիջում շատ սինթետիկ դեղատնային դեղամիջոցներին, որոնց յուրացման մակարդակը օրգանիզմի կողմից 5% է: Մասուրի եփուկը շատ արդյունավետ է հատկապես ձմռանը՝ սուր շնչառական վիրուսային վարակների դեպքում: Մասուրը ոչ միայն հարուստ է օգտակար նյութերով, այլ նաև օգնում է արդյունավետ պայքարել ավելորդ քաշի դեմ: Սակայն բուսահումքի մեծ դոզաները (50 մգ/կգ քաշին) փորձնական պայմաններում առաջ են բերում օրգանիզմի դիմադրողականության ճնշում, անեմիա, լեյկոցիտների ֆագոցիտային ակտիվության նվազում, ենթաստամոքսային գեղձի ինսուլինային ապարատի ֆունկցիոնալ գրգռվածություն, կորտիկոստերիոիդների քանակական ավելացում, երիկամային ֆունկցիոնալ շեղումներ: Այն, ընդհանրապես հակացուցված է թրոմբոզների ժամանակ:

Կիրառման եղանակները: Վիտամինացված թեյ պատրաստելու համար մասուրի ու ազնվամորու պտուղների հավասար քանակությունը (կարելի է նաև օգտագործել թարմ սառեցված ազնվամորի) լցնել 200 մլ եռման ջրի մեջ, թողնել թրմվի այնքան մինչև թեյի ջրմաստիճանը դառնա սենյակային ջերմաստիճան: Խմել օրական 3-4 անգամ: Այն հիանալի կօզնի տարվա ցանկացած ժամանակահատվածում պայքարել մրսածության հիվանդությունների դեմ: Նիհարելու նպատակով հարկավոր է օրական 3-4 անգամ խմել մասուրի եփուկ կամ թուրմ: Միջինում ընդունման կուրսը 2-4 շաբաթ է: Եփուկը պատրաստելու

համար վերցնել 3 ճ/գ մասուրի չոր պտուղներ, լցնել 1 լիտր եռման ջրի մեջ, թողնել թրմվի 12 ժամ ու ընդունել սնունդ ընդունելուց 30-40 րոպե առաջ:

Մասուրի եփուկի պատրաստման ժամանակ այն հարկավոր է հասցնել եռման ջերմաստիճանի, որից հետո ծածկել կափարիչով ու թողնել թրմվի 12 ժամ: Շաքար խորհուրդ չի տրվում լցնել եփուկի մեջ, սակայն կարելի է: Մասուրի եփուկն արդյունավետ կլինի, եթե պահպանվի ջրի ու պտղի 1:10 հարաբերակցությունը, այսինքն՝ 1լիտր ջրին՝ 100 գրամ մասուր:

Մասուրով եփուկը շատ օգտակար է, սակայն, այնուամենայնիվ, այն որոշ մարդկանց հակացուցված է: Օրինակ, այն խորհուրդ չի տրվում շաքարային դիաբետով ու լեղաքարային հիվանդությամբ տառապողներին, հակացուցված է աղեստամոքսային տրակտի խոցային հիվանդությամբ ու գաստրիտով տառապող մարդկանց: Հղի կանայք օրական չպետք է 1 լիտրից ավել մասուրով թեյ խմեն, հակառակ դեպքում այն կարող է վնասել օրգանիզմին:

Ուրց սողացող, վայրի ծոթրին - *Thymus serpyllum* L. – Чабрец ползучий, богородская трава

Ուրց սովորական - *Thymus vulgaris* L. 1753, Чабрец обыкновенный

Ուրցադաղձ – *Ziziphora* L. – Зизифора

Հայկական տարանուններ- խոռն, ծոթրին, մեշ: Խուլլեղինջազգիների (շրթնածաղկավորներ) ընտանիքի բազմամյա խոտաբույսերի կամ կիսաթփերի ցեղ է: Արցախում շատ տարածված ու ժողովրդի կողմից լայնորեն գործածվող բույս է: Տարբեր վայրերում հանդիպում են տարբեր տեսակներ: Ուրցադաղձը /զիզիֆորա/ հանդիպում է բարձր լեռնային գոտում, ունի սուր հոտ: Ուրց սովորականի ցողունը գետնամերձ է, խիստ ճյուղավորվող, բարձրությունը՝ 10-30 սմ, հիմքում՝ փայտացած: Տերևները հակադիր են, ամբողջական, կոթունավոր կամ նստադիր, ձվաձև կամ նշտարաձև: Ծաղիկները մանր, վարդագույն, մանուշակագույն կամ սպիտակ են: Ծաղկում է հունիս-սեպտեմբերին: Ուրցը պարունակում է 0.5 - 1% եթերայուղ, որի բաղադրիչներն են՝ թիմոլը, կարվակրոլը, ցիմոլը, տերպինենը: Պարունակում է որոշ քիմիական տարրեր՝ կալիում, կալցիում, մագնեզիում: Բուժման նպատակով օգտագործում են ուրցի վերգետնյա մասը, որը կտրում են բույսի ծաղկման ընթացքում, չորացնում բացօթյա պայմաններում: Ցուցաբերում է խորխաբեր, հակամիկրոբային և հակաբորբոքային ազդեցություն: Ուրցի պրեպարատներն օգտագործում են հազով ուղեկցվող բրոնխաթոքային հիվանդությունների ժամանակ: Թիմոլի շնորհիվ բույսը ցուցաբերում է հակաճիճկային ակտիվություն: Օգտագործում են շաքարային դիաբետի ժամանակ, ինչպես նաև որպես համեմունք: Հակացուցված է հղիության, լյարդի և երիկամային հիվանդությունների ժամանակ: Պահում են առանձին այլ հումքերից, արևի ճառագայթներից զերծ: Տարածված է ցածր, միջին և բարձր լեռնային գոտիներում:

Կիրառման եղանակները: Ջրաթուրմ պատրաստելու համար 10գ չոր հումքի վրա ավելացնում են 200մլ եռման ջուր, փակում կափարիչով և 15 ր եռացնում, հետո զովացնում են սենյակային ջերմաստիճանում 45 ր, թրմում և ջրի քանակը հասցնում 200մլ-ի՝ ավելացնելով եռացրած ջուր: Խմել մեկ ճաշի գդալ, օրական 2-3 անգամ հազի ժամանակ: Եփուկը պատրաստում են նույն եղանակով, բայց տարբեր չափանիշներով:

Ուրցը հակացուցված է հղիության, սրտային անբավարարության, լյարդի և երիկամների հիվանդությունների դեպքում:

Անանուխ, դաղձ - *Mentha* - Мята

Հայկական տարանունները-դաղձ, նանա, քարանուխ: Պատկանում է շրթնաձաղկավորների կամ խուլեղինջազգիների ընտանիքին: Անանուխը (դաղձ) բազմամյա, կոճղարմատավոր վայրի կամ մշակովի խոտաբույս է: Հայտնի է մոտ 20 տեսակ, Արցախում հանդիպում են հետևյալ տեսակները. դաղձ դաշտային /*M. Arvensis*/, Դ. երկարատերև /*M. Longifolia*/, Դ. լվաձաղիկ /*M. Pulegium*/: Մշակության մեջ տարածված են՝ պղպեղահամ անանուխը /*M. piperita*/ և գանգուր անանուխը /*M. crispa*/: Աճում են ամենուրեք: Բույսը ցրտադիմացկուն է, խոնավասեր ու պահանջկոտ լույսի նկատմամբ, իսկ շոգ եղանակին, աճը խիստ դանդաղում է: Ծաղկում է հիմնականում հուլիս-օգոստոս ամիսներին: Բուժման նպատակով հիմնականում օգտագործում են բույսի տերևները: Հումքը հավաքում են ծաղկման ժամանակ, մի քանի ժամ թողնում են արևի տակ, հետո լրիվ չորացնում քամոտ վայրում, այսինքն՝ համեմատաբար հով տեղում: Այս բույսի ցեղի «մենթա» անվանումը ծագել է հին հունական դիցաբանության հավերժահարս Մինթայի անունից, որին բուսաշխարհի աստվածուհին՝ Պերսեֆոնեն, դարձրեց անանուխ՝ Աֆրոդիտին նվիրելու համար: Տերևները և ծաղիկները պարունակում են էթերայուղ, կարոտին, մենթոլ և այլն: Մենթոլն ունի անոթալայնիչ, հանգստացնող և տեղային ցավամոքիչ ներգործություն: Մտնում է վալիդոլի, Ջելենինի կաթիլների և այլ պատրաստուկների բաղադրության մեջ:

Կիրառման եղանակները: Տերևների թուրմն օգտագործվում է մարսողության կանոնավորման, լնդերի բորբոքման, սրտխառնոցի և այլ դեպքերում: Դրա համար 2 ճաշի գդալ մանրացրած թարմ հումքը 30 րոպե թրմում են մեկ բաժակ եռման ջրում, քամում ու գոլ վիճակում ըմպում կումերով: Նյարդային գրգռվածության, լոգանքների, հոգնայի նպատակով պատրաստում են եփուկ, որի համար 50 գ հումքը մեկ դույլ ջրում եռացնում են 15 րոպե(1): Բժշկության մեջ կիրառվում է ոչ միայն բուսահումքը, այլ նաև նրանից ստացվող էթերայուղերը: Բույսի կաթիլներն ու եփուկը լոգանքի ձևով օգտագործում են երեխաների ռախիտի, գեղձախտի, աղեստամոքսային ուղու խանգարումների ժամանակ: Տերևների թրջոցն օգտագործում են ռևմատիկ հոդացավերի ժամանակ: Նանայով համեմում են շատ ըմպելիքներ և սննդատեսակներ: Այն լայն կիրառում ունի նաև կոսմետոլոգիայում:

Պատրինջ դեղագործական, թուրինջ խոտ – *Melissa officinalis* L.- Мелисса лекарственная

Հայկական տարանունները - թրնջխոտ, թուրինջ խոտ, պատրինջ, լիմոնիկ:

Շրթնաձաղկավորների ընտանիքին պատկանող բազմամյա խոտաբույս է: Ունի ուղղահայաց կանգնող, քառանիստ, ճյուղավոր, աղվամագով պատված, 50-120 սմ բարձրություն ունեցող ցողուն: Տերևները կոթունավոր են, ունեն ձվաձև, ատամնաձև կտրտված եզրերով տերևաթիթեղ: Ծաղիկները գագաթնային են, ծաղկապսակը սպիտակ է կամ վարդագույն՝ կարմիր բծերով: Աճում է անտառներում, բացատներում, ստվերոտ լեռնանցքերում: Պարունակում է եթերայուղ, դաբաղող նյութեր, խեժ, լորձ, օրգանական թթուներ, վիտամին C, կարոտին: Բուժական նպատակով հավաքում են բույսի ծաղկած վերգետնյա մասը, չորացնում ստվերում, լավ օդափոխվող տեղում: Բույսն ախորժաբեր է և ունի մարսողական օրգանների գործունեությունը խթանող ազդեցություն, հակացնցումային, ցավազրկող հատկություններ, բարձրացնում է կենսոնակությունը, ցրում մելամաղձությունը: Կիրառվում է ընդհանուր հյուծվածության, նյարդացավի, գլխացավերի, ստամոքսի ցավերի, արյան բարձր ճնշման, անքնության դեպքերում: Ժողովրդական բժշկության մեջ մեծ է նրա դերը տրախիկարդիայի, սրտի շրջանի ցավերի, բարձր ջերմությամբ ուղեկցվող հիվանդությունների, անկանոն դաշտանի բուժման ժամանակ: Արտաքին օգտագործման եղանակով այն կիրառվում է ռևմատիկ արթրիտներն ու խոցերը բուժելիս:

Կիրառման եղանակները: Պատրաստել 1/10 հարաբերությամբ թուրմ և խմել մեկ ճաշի գդալ, օրական 3-4 անգամ: Օգտագործվում է թրթնջախոտի յուղը 10-15 կաթիլ՝ ներքին ընդունման համար:

Երիցուկ դեղատնային - *Ромашка аптечная* - *Matricaria chamomilla* L.

Հայկական տարանունները - օշոշ, հավածաղիկ, արգանդախոտ, խնձաղեղ, կոկոռճիկ, կուծուռի, լալապնդիկ: Դեղատնային երիցուկը բարդաձաղկավորների (Compositae) ընտանիքին պատկանող բուրու մնավետ, միամյա բույս է, ունի մինչև 60 սմ բարձրություն: Ցողունն ուղղաձիգ է կամ վեր սլացող, բարակ, ճյուղավոր: Տերևները դասավորված են հերթադիր, նստած, երկակի կամ եռակի փետրավոր, կտրտված բարակ, նեղ հատվածներով: Ծաղկային զամբյուղիկները խոշոր չեն, եզրային ծաղիկները սպիտակ գույնի են, ներքին ծաղիկները՝ ոսկեդեղնավուն, ունեն ուժեղ բուրու մնավետ հոտ: Ծաղկում է մայիս-սեպտեմբեր ամիսներին: Պտուղները սկսում են հասունանալ հուլիս ամսին: Բույսն աճում է փշատերև, խառը և լայնատերև անտառների բացատներում, ճանապարհների երկայնքով, անտառահատված մասերում, բնակավայրերում, այգիներում, ցանքատարածություններում: Ծաղկաբույլերը հավաքում են ծաղկման սկզբում, երբ սպիտակ, լեզվակավոր ծաղիկները հորիզոնական են տեղավորված զամբյուղներում: Զամբյուղիկների հավաքումը կատարվում է չոր եղանակին, քանի որ անձրևից հետո, ցողի ժամանակ կամ

մատախլապատ եղանակին հավաքված զամբյուղիկները վատ են չորանում և չորացումից հետո մգանում են: Հավաքված հումքը չորացնում են բաց օդում, մինչև 5 սմ հաստությամբ շերտերով: Հումքի պիտանելիության ժամկետը մեկ տարի է: Բույսը պարունակում է սալիցիլաթթու, ասկորբինաթթու, դառնահամ նյութեր, ֆիտոստերին, դաբաղանյութեր, խոլին, եթերայուղ (մինչև 0,85%), որի կազմում կան մոտ 40 տարբեր տարրեր: Ինչպես նաև՝ ստեարինային թթուների գլիցերիդներ, ֆլավոնային գլիկոզիդ, ումբելիֆերոն, դիօքսիկումարին, շաքար, մոմ, յուղեր՝ լինոլեային, պալմիտինային, օլեինային: Դեղատնային երիցուկը՝ որպես դեղամիջոց, հայտնի էր դեռ Հին Հունաստանի և Հռոմի բժիշկներին: Դեղատնային երիցուկի պատրաստուկները ցուցաբերում են հակակծկանքային (սպազմոլիտիկ), հակաբորբոքային, հականեխիչ (անտիսեպտիկ), հանգստացուցիչ (սեդատիվ) և որոշ չափով ցավազրկող ազդեցություն: Երիցուկի թուրմն ընդունելու դեպքում բարձրանում է մարսողական գեղձերի հյութազատությունը (սեկրեցիան), ցուցաբերում է լեղամուղ ազդեցություն, քչացնում է խմորման գործընթացները, վերացնում աղիների կծկումները: Բույսի հակակծկանքային ազդեցության մեխանիզմը բացատրվում է նրա գլիկոզիդների Մ-խոլինոլիտիկ հատկություններով: Երիցուկի եթերային յուղը որոշ չափով ուժեղացնում և խորացնում է շնչառությունը, հաճախացնում սրտի կծկումների ռիթմը, լայնացնում գլխուղեղի անոթները, ունի նաև ախտահանիչ և հակաբորբոքային հատկություններ՝ շնորհիվ իր կազմի մեջ մտնող խամագուլենի: Երիցուկի պատրաստուկներն արագացնում են խոցերի էպիթելի վերականգնողական գործընթացները և դադարեցնում բորբոքման զարգացումը:

Կիրառությունը: *Ծաղիկների թուրմը* (ներքին) օգտագործում են ստամոքսաաղիքային ուղու հիվանդությունների, լյարդի և լեղուղիների հիվանդությունների, փքանքի (մեթեորիզմ), ստամոքսի կծկումների (սպազմ) ժամանակ:

Հոգնաների ձևով՝ կոլիտների և թութքի ժամանակ:

Ողողումների ձևով՝ լնդերի, բերանի խոռոչի լորձաթաղանթի բորբոքումների ժամանակ, անգինաների դեպքում:

Թրջոցների ձևով՝ էկզեմայի, խոցերի, թարախաբշտերի, ռենտգենյան ճառագայթներից այրվածքների ժամանակ:

Տաք թրջոցների ձևով՝ ռևմատիզմի, պոդագրայի, արթրիտների, վնասվածքների ժամանակ:

Փոշին՝ ծողովորական բժշկության մեջ՝ միզքենի դեպքում:

Հյուլթը (ներքին). գաստրիտների, ստամոքսի խոցային հիվանդությունների, ստամոքսի և աղիների կծկումների և ցավերի, փքանքի, փորլուծերի, լյարդի, լեղապարկի և միզապարկի հիվանդությունների, երիկամային ցավերի (կոլիկ) ժամանակ: Խորհուրդ է տրվում հյուլթն օգտագործել ստամոքսահյուլթի բարձր թթվայնության դեպքում: Գիշերը մեղրի և կաթնասերի հետ հյուլթի օգտագործումը նպաստում է խոր քնին:

Արտաքին ողողումների ձևով. անգինայի դեպքում, աչքերի լվացման համար, վերքերի, վերջույթների քրտնելու ժամանակ:

Կիրառման եղանակները: Երիցուկի ծաղիկների եփուկը (Decoctum florum Chamomillae). 10 գ (4 ճաշի գդալ) հումքը տեղափոխում են էմալապատ տարայի մեջ, ավելացնում 200 մլ եռման ջուր, ծածկում կափարիչով և տեղավորում եռացող ջրային բաղնիքում՝ 30 րոպե, ապա հովացնում սենյակային ջերմաստիճանի պայմաններում՝ 10 րոպե: Քամում են, մնացած հումքը մզում: Ստացված եփուկի ծավալը դարձնում են 200 մլ՝ ավելացնելով եռման ջուր: Ստացված եփուկը պահում են սառը տեղում՝ 2 օրից ոչ ավել: Օգտագործում են 1/3-1/2 բաժակ, օրը 2-3 անգամ, ուտելուց հետո, որպես հակակծկանքային, հակաբորբոքային, հականեխիչ, քրտնեցնող, աղիների կծկանքների, փքանքի, լուծերի ժամանակ:

Արտաքին օգտագործման և հոգնանների ժամանակ 1,5 ճաշի գդալ պատրաստուկին ավելացնում են 1լ ջուր: Օգտագործում են 1/2 թեյի գդալ պատրաստուկից՝ ավելացրած 1 բաժակ տաք ջրի մեջ:

Երիցուկի թարմ հյութը ստանում են հուլիս-օգոստոս ամիսներին: Օգտագործում են 1 ճաշի գդալ հյութը՝ մեղրի հետ, օրը 3 անգամ, մինչև ուտելը:

Հակացուցում՝ երիցուկի եթերային յուղի բարձր չափաբաժինները կարող են առաջացնել գլխացավ և ընդհանուր թուլություն:

Եղինջ երկտուն-Urtica dioica L.- крапива двудомная

Հայկական տարանունները - աղինձ, աղկեպ, անճիրե, բանջար, պենջար, եղիձ, կճան, կճանխոտ, մոմուռ խոտ, մրմնջուկ

Եղինջը եղինջազգիների ընտանիքին (Urticaceae) պատկանող 60-170 սմ երկարության բազմամյա խոտաբույս է: Ունի գեղձային այրող մազիկներով ծածկված ցողուն, ատամնաեզր, հակադիր տերևներ: Ծաղիկները մանր են, միասեռ, կանաչ: Ծաղկում է հունիսից մինչև աշուն, պտղակալում՝ հուլիսից: Հանդիպում է ԼՂ բոլոր գոտիներում, իր երկու տեսակներով՝ Ե. երկտուն (U. dioica) և Ե. այրող (U. urens), որոնք դեղորայքային առումով ունեն գրեթե նույն նշանակությունը: Բույսը աճում է ստվերոտ տեղերում, խոնավ անտառներում, թփուտներում, բացատներում, տնամերձ հողամասերում, ցանկապատերի մոտ և այլուր, հաճախ տալով հոծ, անանցանելի բուսուտներ: Եղինջը տերևներում պարունակվում է մինչև 200 մգ% վիտամին C, 100 մգ եղինջի մեջ հայտնաբերվել է 1,3 մգ պղինձ, 4 մգ երկաթ, 8,2 մգ մանգան, 4,3 մգ բոր և այլ տարրեր: Բուժական նպատակով օգտագործում են բույսի տերևները, որոնք հավաքվում են բույսի ծաղկման շրջանում: Չորացնելուց հետո պահում են թղթե տոպրակների մեջ, պիտանի է 2 տարի: Եղինջը ունի արտահայտված արյունահոսությունը դադարեցնող, հյուսվածքների ամբողջականությունը վերականգնող, միզամուղ, հակատենդային, խորխաբեր ազդեցություններ, ինչպես նաև աչքի ընկնող լուծողական, ցավազրկող հատկություններ: Եղինջը օգտագործում են սակավարյունության, աթերոսկլերոզի, մկանային և հոդային ռևմատիզմի, քոր

եկող մաշկային էկզեմաների, լյարդի և լեղածորանների հիվանդությունների, մարսողության խանգարումների, ստամոքսի ցավերի ժամանակ: Կերակրող մորը խորհուրդ է տրվում խմել այս բույսի թուրմը, որպես կաթն առատացնող միջոց:

Կիրառման եղանակները: Ջրաթուրմ պատրաստելու համար 4 թեյի գդալ մանրացրած, չորացրած թփերը 1 բաժակ եռման ջրում թրմել, խմել օրական 3 անգամ, ուտելուց կես ժամ առաջ: Արտաքին օգտագործման համար վերցվում է չորացրած տերևների կրկնակի դոզաչափ: Եփուկ պատրաստելու համար վերցնել 50-60գ հումք, եռացնել 1լ ջրում 30 րոպե, խմել օրական 3 անգամ, մեկական բաժակ: Լավ միջոց է աղեստամոքսային համակարգը հանգստացնելու համար:

Խնկածաղիկ սովորական-*Origanum vulgare L.*- душица обыкновенная

Հայկական տարանունները - գվիրակ, թորթ, թորթիկ, կատավան, սևածաղիկ
Շրթնածաղկավորների ընտանիքին պատկանող, 30-80 սմ բարձրությամբ բազմամյա խոտաբույս է: Ունի ճյուղավորված, սողացող կոճղարմատ, քառանիստ, կարմրամանուշակագույն ցողուն, երկարավուն ձվաձև տերևներ, ծիրանագույն, անուշաբույր ծաղիկներ: Ծաղկում է ողջ ամռան ընթացքում, պտղակալում՝ օգոստոս-սեպտեմբերին: Տարածված է անտառային և հովտային մարգագետիններում, անտառների բացատներում, գետահովիտներում և այլուր:

Բույսը պարունակում է մինչև 1,5% եթերայուղ, ֆլավոնոիդներ, պիզմենտ, C վիտամին (տերևներում 565մգ%): Տերևներում հայտնաբերված է նաև կարոտին, իսկ սերմերում՝ մինչև 25% ճարպայուղ: Բուժման նպատակով օգտագործում են բույսի ամբողջ վերգետնյա մասը: Ունի արտահայտված հակաբորբոքային, մանրէասպան, ցավազրկող, ստամոքսափայտի արտադրությունը խթանող, լեղամուղ, միզամուղ, խորխաբեր ազդեցություններ: Կիրառվում է սուր և խրոնիկ բրոնխիտների, կապույտ հազի, ստամոքսի և աղիքների կծկանքի, նյարդային բարձր գրգռվածության, ախորժակի բացակայության, դեղնախտի, լեղապարկի և լյարդի հիվանդությունների, ինչպես նաև քոր եկող էկզեմաների և թարախակաված վերքերի ժամանակ:

Կիրառման եղանակները: Ջրաթուրմը՝ ներքին ընդունման համար, պատրաստում են 2 ճաշի գդալ հումքին ավելացնելով 200 մլ ջուր: Այն օգտագործում են գոլ վիճակում, 1/2 բաժակ, օրական 2 անգամ, ուտելուց 15 րոպե առաջ: Արտաքին ընդունման համար՝ 100-200գ հումքը թրմում են 2-3լ եռման ջրում: Եփուկը պատրաստում են 10-15գ հումքը 10ր 1 բաժակ եռման ջրում եռացնելով: Ոգեթուրմն օգտագործվում է ատամնաբուժության մեջ՝ 1:2-ի հարաբերությամբ /1 մաս չոր հումք և 2 մաս սպիրտ/, որի համար խառնում են 70 աստիճանի սպիրտի հետ և խմում 20-ական կաթիլ, ջրով, օրական 3 անգամ(1):

Ծիծեռնախոտ մեծ -*Chelidonium majus L.*- Чистотел большой(3,6):

Հայկական տարանունները - դեղին կոճ, ծիծեռնադեղ, կանթեղախոտ, հողմափայտ

Կակաչազգիների ընտանիքին պատկանող, 30-70 սմ, մազիկներով ծածկված, ճյուղավոր ցողունով, բազմամյա խոտաբույս է: Արմատն առանցքային է՝ ճյուղավոր, կարճ կոճղարմատով: Տերևները փետրածն են ու կտրտված 30-100 սմ երկարությամբ: Ծաղկաբույլը հովանոցաձև է, զագաթնային, պսակաթերթերը՝ ոսկեդեղին: Պտուղը պատիճանման տուփիկ է, սերմերը՝ սև: Բույսի բոլոր մասերը փափուկ են ու նուրբ և վնասվելուց արտադրում են հիմնային ռեակցիայի նարնջագույն կաթնահյութ: Հանդիպում է բանջարանոցներում, աղբուտներում, սովերոտ տեղերում, այգիներում, քարերի արանքում՝ գերադասելով խոնավ և պարարտ հողերը: Ծաղկում է ապրիլ-հունիս ամիսներին, պտուղները հասունանում են հուլիս-սեպտեմբերին: Անձրևից առաջ ծաղիկները փակվում են, որը ծաղկափռի պաշտպանելու նշանակություն ունի: Բույսը ծաղկում և թառամում է ծիծեռնակի գալու և չվելու ժամանակ: Պարունակում է ալկալոիդներ, ֆլավոնոիդներ, սապոնիններ, օրգանական թթուներ, էթերայուղ, վիտամին C, ասկորբինաթթու: Բուժման նպատակով օգտագործում են ծաղկի վերգետնյա մասը, երբեմն նաև արմատները, հավաքում են ծաղկման շրջանում, չորացնում տանիքում թղթի վրա՝ բարակ շերտով փռված վիճակում: Պահում են թղթե տոպրակների մեջ: Դեղաբույսը աչքի է ընկնում ցավազրկող, լեղամուղ, մանրէասպան, հյուսվածքների ամբողջականությունը վերականգնող ազդեցություններով: Կիրառվում է մաշկային պալարախտի, հողատապի, ռևմատիզմի, էկզեմայի, մաշկի չարորակ ուռուցքների, դերմատոզների, դժվարությամբ ապաքինվող վերքերի, ստամոքսի և 12-մատնյա աղիների խոցային հիվանդությունների, ուղեղային պարեզների դեպքում: Ծիծեռնախոտի մեծ դոզաներից կարող են առաջանալ թունավորումներ, որի ժամանակ նկատվում է ծարավի զգացում, ծանրություն ստամոքսում և գլխում, նույնիսկ ուշաթափություն, սրտանոթային անբավարարություն(1,4,7):

Կիրառման եղանակները: Թարմ կաթնահյութը կոկորդի պապիլոմայի, մաշկի քաղցկեղի, գորտնուկների և ոտքերի կոշտուկների ժամանակ օգտագործում են տարբեր չափերով՝ նոսրացնելով գլիցերինով: Զրաթուրմը պատրաստում են հետևյալ կերպ. 5գ հումքին ավելացնում են 200մլ եռման ջուր, 45 ր պահում սենյակային ջերմաստիճանում, քամում մնացորդային հումքը, մզում մզվածքը, թուրմը հասցնում 200մլ-ի՝ ավելացնելով եռման ջուր: Խմում են 1/2-3 բաժակ, օրական 2-3 անգամ, ուտելուց 15 ր առաջ (միզամուղ, լեղամուղ, ցավազրկող և լուծողական միջոց): Արտաքին օգտագործման համար 10գ հումքը թրմում են 100գ ջրում՝ վերը նշված եղանակով, օգտագործում են թրջոցների ձևով՝ դերմատիդների ժամանակ:

Եզան լեզու մեծ- *Plantago major* L., 1753 –подорожник большой(3,6):

Հայկական տարանունները - գաղտիկ, գառնալեզու, եզնալեզու, կաթնկոռնի, ջղախոտ

Ջղախոտազգիների (Plantaginaceae) ընտանիքին պատկանող 10-40 սմ բարձրության բազմամյա խոտաբույս է՝ 3-9 խոշոր, ձվաձև տերևներով: Տարածված են բույսի մեծ, միջին, նշտաբատերն տեսակները: Բույսը բազմանում է սերմերով, ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, իսկ պտուղները հասունանում են ամռան ամիսներին: Այն տալիս է ցաք ու ցրիվ բուսուտներ: Բավականաչափ պահանջկոտ է հողի նկատմամբ: Չոր եղանակին տերևները փոփում են գետնին, դրանով իսկ պահպանում արմատի խոնավությունը, մինչդեռ խոնավ եղանակին տերևները բարձրանում են: Բույսը աճում է ճամփեզրերին, աղբուտներում, ամայի տեղերում, տնամերձ հողամասերում, մարգագետիններում, ցանքերի մեջ և այլուր:

Եզան լեզուն ժողովրդական բժշկության մեջ օգտագործվել է բրոնխիտների, թոքերի պալարախտի, կապույտ հազի, ստամոքսաղիքային տրակտի մի շարք հիվանդությունների ժամանակ: Եզան լեզուն բույս է, որը տարածված է ամբողջ աշխարհում: Շնորհիվ իր բուժիչ հատկությունների՝ այն հազարամյակներ շարունակ օգտագործվել է բուսաբուժության մեջ (1,4,5): Եզան լեզվի տերևները պարունակում են մեծ քանակությամբ վիտամին C, որը շատ արդյունավետ է իմունիտետը բարձրացնելու համար: Բացի այդ, դրանք նաև հարուստ են վիտամին A-ով (որը պահպանում է աչքերի առողջությունը՝ պաշտպանելով հիվանդություններից, որոնք կարող են հանգեցնել կուրության), վիտամին K, կալցիում և բետա-կարոտին: Այս բույսն օժտված է հակաբորբոքային, հակամանրէային, հակահիստամինային, միզամուղ, խորխաբեր հատկություններով և օգնում է դադարեցնել արյունահոսությունները: Եզան լեզուն արյան միակ բնական մաքրողն է, որն ի վիճակի է թեթևացնել սնդիկով թունավորման նշանները: Եզան լեզվի տերևները կարելի է օգտագործել հում վիճակում կամ ավելացնել աղցաններին: Դրանք, հակաբորբոքային հատկությունների շնորհիվ, օգնում են հանգստացնել թարախակույտերի, միջատների խայթածի, մանր վերքերի և մաշկային այլ խնդիրների հետևանքով առաջացած ցավն ու քորը: Բացի այդ, այդ տերևներով կարելի է պատրաստել թուրմեր, օշարակներ կամ թեյեր: Այս յուրահատուկ բույսը կարելի է օգտագործել նաև օրգանիզմի ընդհանուր վիճակը բարելավելու համար:

Կիրառման եղանակները: Եզան լեզվով թեյի բաղադրատոմս. 1 ճ.գ. թարմ կամ չորացրած բույսին (սերմերը, արմատները և տերևները) ավելացնել 1 բաժակ եռման ջուր, թրմել 10 րոպե, քամել, հովանալուց հետո կարելի է ավելացնել քիչ մեղր (ըստ ցանկության):

Վերքերը բուժելու և մաշկային խնդիրների հետ կապված քորի ու ցավի մեղմացման համար տերևը ընկղմել տաք ջրի մեջ, դնել վերքին և կապել: Եզան լեզուն հարուստ է վիտամիններով և հանքանյութերով, հատկապես՝ երկաթով,

որի համար երիտասարդ բույսն օգտագործել ամեն օր՝ ավելացնելով աղցաններին:

Արցախում բնակչության կողմից հաճախակի են օգտագործվում ստորև նկարագրված թփատեսակների և ծառատեսակների հումքը մրսածության, հիպերտոնիայի, որպես վիտամինների աղբյուր և այլ նպատակներով:

Սզնի արևելյան- *C. orientalis* Pall.- պատկանում է Վարդագգիների /Rosaceae/ ընտանիքին: Փոքր ծառ կամ խոշոր թուփ է, 2,5 մ բարձրությամբ:

Մոշենի սովորական - *R. caesius* L. պատկանում է Վարդագգիներ / Rosaceae/ ընտանիքին: Տերևաթափ կամ կիսամշտադալար թուփ է կամ կիսաթուփ՝ մինչև 1.5-2 մ բարձրությամբ: Ծաղկում է հունիսից-օգոստոս, պտուղները հասունանում են օգոստոսին:

Մոռենի սովորական կամ ազնվամորի – *R. idaeus* L. - պատկանում է Վարդագգիների /Rosaceae/ ընտանիքին: Մինչև 1-1.5 մ բարձրությամբ կիսաթուփ է: Ծաղիկները սպիտակ են՝ հավաքված վահանաձև ծաղկաբույլերում:

Կարմիր հաղարջ /*Ribes rubrum* L., 1753/ պատկանում է Կոկոռնագգիներ / Grossulariaceae/ ընտանիքի՝ Հաղարջենի /*Ribes* L / ցեղին: Մշակության մեջ տարածված են սև ու կարմիր հաղարջենիների ներմուծված տեսակները: Կարմիր, սովորական կամ պարտեզի հաղարջը փոքր տերևաթափվող թուփ է: Ծաղիկները շատ մանր դեղնականաչավուն կամ կարմրաշագանակագույն են, դասավորվածությունը՝ ողկուզավոր: Ծաղկում է մայիս ամսին:

Սև հաղարջ /*Ribes nigrum* L., 1753/: Տերևաթափ թուփ է՝ 1-1,5 մետր բարձրությամբ: : Ծաղիկները զանգականման են, կարմրակապտավուն կամ մոխրավարդագույն, դրսի կողմից մազմզուկապատ: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում է հուլիսին:

Շորենի սովորական (*Berberis vulgaris* L., 1753), պատկանում է Շորենագգիների (Berberidaceae) ընտանիքին, տերևաթափ, 1,5-3 մ բարձրության փոշոտ թուփ է, ունի մուգ կարմիր, հյութալի, թթու, հատապտուղներ: Ծաղկում է մայիս-հունիս, իսկ պտուղները հասունանում են սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին: Հայկական ժողովրդական բժշկության մեջ բույսի արմատի եփուկը՝ տեղ է գտել աղիքային խիթերի բուժման ցանկում, իսկ արմատը և պտուղները՝ տրորված վիճակում, ներքին ընդունման ձևով, կիրառվել են պալարախտի ժամանակ, հատկապես հազի և հևոցի առկայության պայմաններում (4,5):

Բոլոր դեղաբույսերի ինքնավերարտադրության նպատակով, հումքի հավաքման ժամանակ, յուրաքանչյուր հատվածում, պետք է թողնել մոտ 20% լավ զարգացած բույսեր:

Եզրակացություն: Կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ բնակչությունը տարբեր հիվանդությունների բուժման ժամանակ առավելությունը տալիս է բուսաբուժությանը: Բժշկական նպատակներով տեղական բնակչությունը հաճախ օգտագործում է 20 տեսակից ավելի բուժիչ բույսեր՝ տեղական ֆլորայի 12 ընտանիքներին պատկանող:

Գրականություն

1. Թորոսյան Ա. Ա, Հայաստանի դեղաբույսերը, Երևան, 1983.
2. Հովհաննիսյան Ջ. Հ., Կանաչ դեղատուփ, Երևան, 2005.
3. Ղազարյան Ռ.Ս., Բուսանունների հայերեն, լատիներեն, ռուսերեն, անգլերեն բառարան, Երևան 1981.
4. Ղուկասյան Է. Գ., Բուժում դեղաբույսերով, Երևան, 1992.
5. Гроссгейм А.А., Дикие съедобные растения Кавказа, Баку, 194.
6. Новиков В.С., Губанов И.А., Популярный атлас определитель дикорастущие растения, М. 2008.
7. Универсальная энциклопедия лекарственных растений, Минск-Москва, 2000.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, կ.գ.դ. Հ.Գ.Գալստյանը: